ՆՈՐԱՅՐ /ԲՈՔ/ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԸ

Մայիսի 23-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով բանգկոկաբնակ հայազգի բարերար Նորայր /Բոք/ Տեր-Գևորգյանին շնորհվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսության բարձրագույն պարգևը՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը: Նորայր Տեր-Գևորգյանի կողմից վերջերս Հայոց եկեղեցուն արված մեծագումար նվիրատվությունը մեծ ներդրում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով Երևանում կառուցվող Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մուտքի Սբ. Աշխեն մատուռի շինարարությանը:

Մինչ սրբատառ կոնդակի ընթերցումը, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը խնդրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը բարերարի համար:

Ապա Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրագույն շքանշանը հանձնեց բարերարին:

Այս արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Վարդան Օսկանյանը, ամերիկահայ բարերար Հրայր Հովնանյանը, հոգևորականներ ու այլ հրավիրյալներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

ԻՍՐԱԵԼՅԱԼ ԿՈՒՆԴԱՏ ՂԱՀՈՒՏՅԱՆԻ ԴԻՄՈԵԿՍԱՐԳԵՐՅԱՆ (ՀԱՅՈՒՄՈ) ԿՍԿ
ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՐՎԱԾ «ՇԱՄԱԽՈՒՄԻ ՄԵԿԻՆԿ Ը.Ո»